

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հուլիսի 7-ից 8-ը ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանի՝ Վրաստան գործուղման արդյունքների վերաբերյալ

### 1. Անուն, ազգանունը՝

Տիգրան Խաչատրյան

### 2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ֆինանսների նախարար

### 3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք. Թբիլիսի, Վրաստան, 2022թ. հուլիսի 7-ից 8-ը

### 4. Հրավիրող կողմը՝

Վրաստանի ֆինանսների նախարարություն

### 5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության միջև հանդիպումներին և աշխատանքային քննարկումներին:

### 6. Քննարկված թեմաները՝

Վրաստան կատարած այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության, ներառյալ՝ վերջինի եկամուտների և մաքսային ծառայությունների բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաև հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների և աուդիտի խորհրդի միջև: Հանդիպումների շրջանակներում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող թեմաները,

ինչպիսիք են՝ բյուջեի թափանցիկությունը և մասնակցողականությունը, մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառումը, մակրոտնտեսական իրավիճակը և հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումները, հարկային, մաքսային հարցեր և այլն:

## **7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Վրաստան այցի շրջանակներում առաջին հանդիպումը նվիրված էր բյուջեի թափանցիկությանն առնչվող հարցերի քննարկմանը, որի ընթացքում հայկական կողմի առաջարկով վրացի գործընկերները ներկայացրին Բաց բյուջեի հետազոտության երեք՝ բյուջետային գործընթացի թափանցիկություն, մասնակցողականություն և վերահսկողություն բաղադրիչների մասով Վրաստանի հաջող փորձը:

Մյուս հանդիպումը նվիրված էր մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման հարցերի քննարկմանն ու փորձի փոխանակմանը: Վրաստանի համապատասխան պետական մարմինները ներկայացրին մասնավոր հատվածի հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում Վրաստանում գործող կարգավորումները, տնտեսավարող սուբյեկտների կողմից Վրաստանի ֆինանսների նախարարության Հաշվապահական հաշվառման, հաշվետվողականության և աուդիտի ծառայությանը ներկայացվող հաշվետվությունների տեսակները, տարբեր օգտագործողների կողմից դրանց հնարավոր կիրառությունը և օգտակարությունը: Անդրադարձ է կատարվել նաև աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակին, աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ որակի հսկողության գործընթացի կազմակերպման հարցերին:

Հաջորդ հանդիպման ընթացքում երկու երկրների ֆինանսների նախարարությունների ներկայացուցիչները ներկայացրին մակրոտնտեսական իրավիճակը, ինչպես նաև երկու երկրներում հանրային ֆինանսների կառավարման արդյունավետությանն ուղղված իրականացված և ընթացիկ բարեփոխումները:

Հարկային հարցերին նվիրված հանդիպման շրջանակներում Վրաստանի ներկայացուցիչները հայկական կողմին են ներկայացրել Վրաստանում կիրառվող շահութահարկի նոր համակարգը և դրա կիրառության ընթացքում արձանագրված արդյունքները: Քննարկվել են նաև հարցեր ֆիզիկական անձանց արտասահմանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկման, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների հարկման վրացական մոտեցումների վերաբերյալ:

## 8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Վրաստան այցի շրջանակներում կայացած հանդիպումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել շարունակել երկուստեք շփումները և հանդիպումները այցի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ երկու երկրների փորձը փոխանակելու և ակտիվ համագործակցություն հաստատելու նպատակով:

Այցը եզրափակվեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության միջև «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության միջև տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային տեղափոխման վերաբերյալ նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակման մասին» հուշագրից բխող ծրագրի մեկնարկի վերաբերյալ արձանագրության ստորագրմամբ:

## 9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

 Recoverable Signature

X *m. Khachatryan*

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN TIGRAN 2112700065

13.07.2022թ.